«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 8080-02

«29» 12 2017

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և «ԱԼՖԱ» ՍՊԸ (այսուհետև՝ Պրինցիպալ) միջև կնքված Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀ ԱՇՁԲ-17/3 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է ՀՀ Ֆինանսների նախարարության /այսուհետ՝ Բենեֆիցիար/՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել **5,346,000 (հինգ միլիոն երեք հարյուր քառասունվեց հազար) ՀՀ** դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի ՀՀ ֆինանսների նախարարության հաշվին փոխանցման միջոցով:
3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Սույն Երաշխիքն ուժի մեջ է մտնում N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀ ԱՇՁԲ-17/3 պայմանագրով նախատեսված կանխավճարի գումարը «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում Պրինցիպալի թիվ 1150010757590100 հաշվարկային հաշվին մուտք լինելու օրվանից և գործում է մինչև 15.03.2018թ. ներառյալ:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   ա) ---------------------------------------------
   բ) ---------------------------------------------
   գ) ---------------------------------------------
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից (բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի) պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել պահանջում նշված գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:
9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ չվճարված գումարի 0.05% չափով:
10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, երբ՝
1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2)Պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:
12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը լուծվում են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ — Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ — Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ.փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл.почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am